

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՄԱՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1

Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

*Աստիճանաբար մոռանալով խառնիճադան-(1) առօր-ական(2) հոգսերը և կտրվելով սրտմաշու-(3) ու տա-տկալի(4) մտքերից՝ Երեմ-ն(5) խաղաղ քուն մտավ: Ժու-կալ(6) մայրը բարեհոգի ժպիտով նայեց խա-շիկի(7) նմանվող իր որդուն, զգույշ վերցրեց մա-մարյա(8) ե-ռտանու(9) վրա դրված լաջվար-(10) զարդատուփը և դուրս եկավ սենյակից:*

- 1) 2-ե, 5-յա, 6-ժ, 10-դ
- 2) 1-ջ, 4-խ, 6-ժ, 7-փ
- 3) 1-ջ, 3-կ, 9-ռ, 10-դ
- 4) 2-ե, 4-խ, 7-փ, 8-ր

2

Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում միասին:

- 1) փոքր(ի)շատե, (ի)հաշիվ, (դռնե)դուռ, (մեջ)բերում
- 2) ի(հարկե), սարն(ի)վեր, քառասուն(յոթ), առ(ոչինչ)
- 3) լատինա(ամերիկյան), ժամկետ(անց), կուզ(ե)կուզ, յոթ(հարյուր)ամյա
- 4) հետ(այսու), ամսե(ամիս), ըստ(այնմ), ի(սպառ)

3

Ո՞ր շարքի բոլոր բառերում է (ե) ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) զինակիր, հանդիսատես, քմահաճույք, հանդիպակաց
- 2) կիզանուտ, սիզանեմ, համատիրություն, միջադեպ
- 3) գիտակ, վիրահատել, ծիսակատարություն, ուղեգորգ
- 4) սիրահոժար, մտամոլոր, գիրուկ, միզապատ

4

Ո՞ր շարքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:

- 1) մեղմանալու, մեկուսի, միանձնուհի, կատակերգու
- 2) հետզհետե, հեռակա, հյուրասիրելու, ձեռնառու
- 3) ձևափոխելու, վերարկու, ճախարակի, մեղավորի
- 4) հիշատակելի, հիանալի, հնամենի, հայելի

5

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) հյուրընկալ, ասպնջական, վանատուր, վաղնջական
- 2) գուցե, թերևս, հավանորեն, ըստ երևույթին
- 3) խառնվել, միանալ, ձուլվել, անէանալ
- 4) հմուտ, ճարտար, վարժ, զգլխիչ

6 Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **եռակցել** – եռքով միացնել, **թավազեղմ** – խիտ բուրդ ունեցող
- 2) **երկպառակություն** – համերաշխության խախտում, **ճարճատյուն** – բորբոքվելով վառվելու կրկնվող ձայն
- 3) **մեղանչել** – մեղք գործել, **երկնուղեշ** – դեպի երկինք ձգվող ճյուղերով
- 4) **սնանկ** – նյութական միջոցներից զուրկ, **բանուկ** – միայն հետիոտների համար նախատեսված

7 Տրված բառերից ո՞րի կազմությունն է՝

*նախածանց+արմատ+արմատ (առանց հոդակապի):*

- 1) համընդհանուր
- 2) անգրագետ
- 3) աներկբա
- 4) անկողմնակալ

8 Ո՞ր նախադասության մեջ բառագործածության կամ բառի կազմության սխալ կա:

- 1) Անբասիր վարկը ձեռք էր բերել տարիների անխոնջ աշխատանքով:
- 2) Նրա այդ վատ արարքը ծանր խարան է իր ընտանիքի համար:
- 3) Բազմիցս խոսվել է այդ մասին, սակայն ապարդյուն:
- 4) Ոչ թե հետաքրքրությունն էր նվազել, այլ տուժվածները հոգնել էին իրենց պայքարից:

9 Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն գոյականների համարները, որոնց հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ.

*1. կայսր, 2. շտաբ, 3. սկյութ, 4. ստրուկ, 5. սանր, 6. սկյուռ, 7. սպի, 8. վագր, 9. աստղ:*

- 1) 2, 4, 5, 7, 8, 9
- 2) 1, 2, 3, 4, 5, 7
- 3) 2, 3, 4, 6, 7
- 4) 1, 3, 5, 6, 8, 9

10 Ո՞ր տարբերակում հարկադրական եղանակի բայածև կա:

- 1) Իսկ սեփական անձի արտացոլման համար Ձեզ հայելի պե՞տք է:  
Ինձ հայելի պետք չէ:
- 2) Աշխարհին, այո՛, մաքրություն է պետք:
- 3) Եվ հայելուց... պիտի կոշիկ կարել,  
Որ ոտնատակն անգամ հողը արտացոլի...
- 4) Մարդկանց մոտ պետք է աչալուրջ լինես, միշտ ոտքի վրա և սուրը ձեռքիդ...

11 **Ո՞ր տարբերակում մակբայ չկա:**

- 1) Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,  
Կթերթեն դանդաղ, կկարդան տողեր:
- 2) Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ մարել ես...
- 3) Կանչում է կրկին, կանչում անդադար  
Էն չքնաղ երկրի կարոտը անքուն:
- 4) Ու սիրում ենք առավոտից իրիկուն  
Ճամփա երթալ ու հավիտյան երազել...

12 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

*Ամբոխը, ..... ծով էր կապել հրապարակում և այլք-այլք կանգնել, մի մարդու պես գետին խոնարհվեց:*

- 1) որ
- 2) երբ
- 3) մինչ
- 4) քանի դեռ

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *աճ* հոլովման:**

- 1) նախադուռ, գառ, գումարում, տոհմանուն
- 2) աշուն, որմնասյուն, ընդմիջում, արարում
- 3) լուծում, ձիաբեռ, եզ, հաստատություն
- 4) ձմեռ, սառցալեռ, հաստատում, մանուկ

14 **Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

- 1) Կարծում ես՝ դեռ շա՞տ ժամանակ կա:
- 2) Լավ գիտեր, որ այդպես վարվելու իրավունք չունի:
- 3) Մենք մտածեցինք, թե արդեն լուսացել է:
- 4) Երբ դուրս էր գալիս և կանգնում բակում, բազմաթիվ աչքեր հիացած նայում էին նրան:

15 **Տրված նախադասություններից որո՞ւմ բաղադրյալ ստորոգյալ չկա:**

- 1) Ընթերցասրահում նրանց գործը նյութեր հավաքելն էր:
- 2) Բլուրները նախկինում չոր ու ցամաք են եղել, իսկ հիմա այգեստան են դարձել:
- 3) Մոտավորապես Մայքի տարիքին էր՝ քսանութ-քսանինը տարեկան:
- 4) Այդ օրը անպայման պետք է վերադառնայի Նյու Յորք:

16

Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված որոշիչ կա:

- 1) Անիկը լուրը լսել էր կատարյալ անտարբերությամբ:
- 2) Կանգնած է վարժապետ Սողոմն՝ իր երկրի հարազատ որդին:
- 3) Հայրենի եզերքը միշտ կարոտով է լցրել իմ հոգին:
- 4) Գևորգին այս միտքը չզարմացրեց:

17


Ո՞ր նախադասության մեջ կոչական կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ողջույն բանաստեղծիդ գեղեցիկ է այս ամենը գոհ ես:
- 2) Դու որ այդպես քնքուշ ես և գեղեցիկ միթե գութ չունես:
- 3) Քո իմաստուն խորհուրդները իմ անմոռաց Սոնա տատ ես միշտ եմ հիշում:
- 4) Վայելիր հարբիր այս երկիրը քոնն է մինչև երկնահույ լեռների պատնեշը:

18

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

*Քանի որ օրիորդը մեծ հակում ուներ դեպի գիտությունը, ուստի և նա, մի պահ անգամ չվարանելով, ուշադրությամբ սկսեց դիտել կատարվող և կրկնվող այն փորձերը, որոնց վկան էր դարձել ինքը:*



19

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:

- 1) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*  
Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
- 2) *Նրա երազանքն այն էր, որ դասերը թողնի ու գյուղ վերադառնա:*  
Դասերը թողնելն ու գյուղ վերադառնալը նրա երազանքն էր:
- 3) *Սարերում այնքան լուռ է, որ շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվում է:*  
Սարերում շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվելու չափ լուռ է:
- 4) *Նրան պառկեցրին, որ մի քիչ հանգստանա, հետո ճանապարհ զգեցին:*  
Նրան պառկեցրին՝ մի քիչ հանգստացնելու և հետո ճանապարհ զգելու համար:

20

**Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Համոյի իրենց անմիջական ղեկավարի հրահանգները ով կարող էր չկատարել:
- 2) Մենք ակամա շրջեցինք քաղաքում Տպագրիչների փողոցից մինչև գետափ մտնելով ասիական թաղի լաբիրինթոսները:
- 3) Սի տարօրինակ կառույց էր դա մեկուսի կանգնած բարձունքին և գրավում էր բոլոր հովեկների ուշադրությունը:
- 4) Իր մեծ ձեռնափայտը հատակին անընդհատ թխկթխկացնելով առաջ էր շարժվում քաղաքի փողոցներով:

21

**Ո՞ր միտքը չի հակասում տրված տեքստի բովանդակությանը:**

*Անգլիայի ճահճոտ հարթավայրում վեր են խոյանում վիթխարի քարեր, որոնք դասավորված են խիստ որոշակի կարգով: Դա Սթոունհենջն է, որ կառուցվել է մեզանից հազարամյակներ առաջ: Ի՞նչ նշանակություն է ունեցել այս հնագույն հուշարձանը: Արևի տաճա՞ր է եղել, ծիսակատարությունների վա՞յր: Բազում առասպելներ է ծնել այս արտասովոր կառույցը, մինչև Բոստոնի համալսարանի պրոֆեսոր Ջերալդ Հոքինսը կենդանացրեց մեռյալ համր քարերը: Պարզվեց, որ այն հնագույն աստղադիտարան է (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ), որը զարմանալի ճշգրտությամբ թույլ է տալիս հաշվել օրացուցային ժամանակը, որոշել տարվա եղանակները և նույնիսկ կանխատեսել Արևի և Լուսնի խավարումները: Պրոֆեսորը պարզեց, որ բազմատոննանոց քարե կամարները նշել են հորիզոնի հատուկ կետերի ուղղությունները:*

- 1) Կենդանացնելով մեռյալ համր քարերը՝ գիտնականը մարդկությանը վերադարձրեց մոռացության գիրկն անցած շատ առասպելներ:
- 2) Մինչ Ջերալդ Հոքինսի ուսումնասիրությունները մարդկությունը վստահ էր, որ Սթոունհենջը արևի տաճար է:
- 3) Մ.թ.ա. 2-րդ հազարամյակից սկսած՝ մարդկանց հայտնի են եղել Արևի և Լուսնի խավարումների պատճառները:
- 4) Սթոունհենջի քարերի միջոցով մարդիկ երկնային մարմինների շարժումների հետ կապված մի շարք կանխատեսումներ են արել:

22

**«Մասնա ծոեր» էպոսի վերաբերյալ ո՞ր պնդման մեջ սխալ չկա:**

- 1) Դավիթը ամուսնանում է Չմշկիկ Սուլբանի հետ, իսկ հետո, Ձենով Հովանից իմանալով Խանդութի գեղեցկության մասին, գնում է նրա մոտ և բազմաթիվ սխրագործություններ կատարելով՝ ամուսնանում վերջինիս հետ:
- 2) Ծովինարի խորհրդով իրենց կառուցած ամրոցը Մանասարն ու Բաղդասարը անվանում են Մասուն:
- 3) Մեծ Միերը գոտեմարտում է Մասունի հացի ճանապարհը կտրող հսկա առյուծի հետ և նրա երախը պատռելով՝ մեջտեղից կիսում:
- 4) Հոր անեծքով Փոքր Միերը մնում է անմահ ու անժառանգ, դևերը բռնում են նրան և փակում Ագռավաքարում:

23

**Ա. Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի ստորև բերված սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) Հրաժեշտի օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:
- 2) Հեղինակ-հերոսը՝ 17-18 տարեկան մի երիտասարդ՝ բանտից նոր դուրս եկած, իր բարեկամի առաջարկով գնում է Չորագյուղ և զբաղվում ուսուցչությամբ:
- 3) Ուսուցիչը Խոնարհին առաջին անգամ տեսնում է անտառի բացատում:
- 4) Բարեկենդանի օրը ուսուցիչը Խոնարհին տեսնում է աղջիկների հետ իրենց դիմացի տան կտուրի վրա ձյունով խաղալիս:

24

**Ո՞ր բառն է բաց թողած:**

*Թանապուրի տաք գոլորշին  
Գերանին առնում  
Եվ այունն ի վար գլոր-գլոր  
..... էր դառնում:*

- 1) կաթիլ
- 2) արցունք
- 3) հուլունք
- 4) հատիկ

25

**Պ. Սևակի «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմի ո՞ր տողերը Մաշտոցին չեն վերաբերում:**

- 1) Ժողովրդի մեջ ննջում են Նրանք,  
Ինչպես ջրի մեջ՝ ահեղ գոլորշին...
- 2) Նրանք ծնվում են, որ ապացուցեն,  
Թե վերջը մի տեղ դառնում է սկիզբ:
- 3) Օտարականի ու հյուրի տեսքով  
Ինքն իրեն տարավ աշխարհից աշխարհ:
- 4) Այդպես արցունք է ծնվում աչքի մեջ,  
Երբ որ աչքի մեջ ընկնում է ավազ:

26

**Պնդումներից որո՞ւմ սխալ կա:**

- 1) «Հացին երգը» Դ. Վարուժանի վերջին ժողովածուն է, որը հրատարակվել է հետմահու:
- 2) Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» հիմքում դրել է ինքնաճանաչման խնդիրը, ինչպես նաև ցույց է տվել հայ ժողովրդի և նրա մշակույթի զարգացման ճիշտ ուղին:
- 3) Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանում արծարծվում են գեղարվեստական գրականության բովանդակությունը արմատապես փոխելու, ինչպես նաև լեզվի և հերոսի ընտրության խնդիրները:
- 4) Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը կազմող մասերը կոչվում են սուրահներ, Պ. Սևակի «Անլռելի գանգակատունը» կազմող մասերը՝ համազանգեր, Հ. Շիրազի «Բիբլիական» պոեմինը՝ դողանջներ:

27

**Տրվածներից ո՞րն է հիշատակված Դ. Վարուժանի «Հարճը» պոեմի՝ Նազենիկի մարմինը բարդու տակ ամփոփելու տեսարանում:**

- 1) Շամիրամը
- 2) Աստղիկ աստվածուհին
- 3) Ճերմակավորը
- 4) Վահագն աստվածը

28

**Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում ո՞վ է Անուշին խորհուրդ տալիս.**

*Թե լալիս ես՝ վարդ ես ուզում՝  
Մայիս կգա, մի քիչ կաց,  
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,  
Ա՛խ, նա գնաց, նա գնա՛ց...*

- 1) Անուշի մայրը
- 2) ծերունին
- 3) անցվոր ախպերը
- 4) ընկերուհին

29

**Ո՞ր տողով է ավարտվում Մ. Մեծարենցի «Աքափաներու շուքին տակ» բանաստեղծությունը:**

- 1) Նըվագն անոր կը հեծեժե հեշտական
- 2) Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
- 3) Ի՛նչ հեշտին է մըթնշաղն այս սատափե
- 4) Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե



30

**Բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակինն է:**

- |  |                |
|--|----------------|
| ա. -Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,<br>Որ երագում երագեցինք ու անցանք...                                      | 1. Վ. Տերյան   |
| բ. ... Այս բանը ոչ՝ Տրդատես նկատեց, ոչ ալ Բակուր.<br>Իրենց անգուսպ մոլուցքին փոշիներեն դարձած կույր...             | 2. Ե. Չարենց   |
| գ. Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,<br>Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով: | 3. Դ. Վարուժան |
| դ. Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,<br>Եվ ալիք մը թևը բացած կը վազե<br>Գրկել ափունքն իղձիս ոսկի ավազե:         | 4. Մ. Մեծարենց |

- 1) ա-3, բ-4, գ-1, դ-2
- 2) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 3) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

31

**Ինչո՞վ է ավարտվում Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը:**

- 1) Հազկերտի՝ Փայտակարան արշավելու և հոներին դիմագրավելու պարսից հազարապետին տված հրամանով
- 2) Բնութագրական մի պարբերությամբ, ուր ասվում է, թե Ավարայրի դաշտից լավում է երգի մի մեղեդի՝ Վարդանանց նվիրված «հին երգը»:
- 3) Եղիշեի՝ Ավարայրի դաշտում նահատակված հայ հերոսների անունների թվարկումով
- 4) Արտակ Մոկացի՝ պատերազմի դաշտում ընկած սիրելիների մասին հիշողություններով

32

**Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*...Եվ հավատացինք, հարբած ու գինով,  
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի –  
Բսկ նրանք եկան՝ արյունով, հրով  
Մեր երկիրը հին դարձրին փոշի...*

- 1) «Մահվան տեսիլ»
- 2) «Վահագն»
- 3) «Հեռացումի խոսքեր»
- 4) «Անվերնագիր»

33

**Քանի՞ բառակապակցության մեջ մեծատառի գործածության հետ կապված սխալ կա.**

Բուլոնյան Անտառ, Բյուրականի աստղադիտարան, Պիպին կարճահասակ, Նոբելյան Կոմիտե, Թուրքմենչայի պայմանագիր, Թուխմանուկ վանք, Էկվադորի հանրապետություն, Բենիլյուքսի Երկրներ, Բևեռային աստղ, Եվրասիական տնտեսական համագործակցություն:

34

**Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**

դիոլ-գուռնա, այսօր-վաղը, անթիվ-անհամար, իրարով անցնել, նոփ-նոր, լավ-վատ, առոք-փառոք:

35

**Անկանոն բայերից քանիսի՞ տվյալ ձևերն են շեղված խոնարհման կանոններից.**

ելնում էին, ասա՛, առանք, բերում է, եղել է, կդառնա, կերան, թողեցի, դրել եք, տեսա:

36

**Նախադասություններից քանի՞սն են համառոտ:**

- Սրտապնդիչ էր նախարարի խոսքը:
- Է՛, ա՛յ որդի, դու թագավոր էլ կդառնաս:
- Սուրը չպիտի բարձրանա մեզ վրա:
- Վահրամն էր միայն գնում-գալիս:
- Իրոք, կախարդական է բնությունը:

37

**Նախադասություններից քանիստ՞ն կետադրական սխալ կա:**

- Բայց որքան հեռանում էր, այնքան ավելի էր զգում ինչ-որ մեկի անհանգստություն պատճառող ներկայությունը:
- Արդեն մի քանի ամիս էր՝ Շիրվանզադեն պատկած էր հիվանդանոցում և ասում էին, որ վիճակը լավ չէ:
- Երբ արդեն տաղտկալի նավագնացության հաջորդ շաբաթվա վերջն էր, նա հասավ Էվրոտասի գետաբերանը և ընկերոջ՝ Էմեասի հետ, դուրս եկավ ավի՛ մի փոքր շրջելու:
- Չարմացած ու ապշած՝ իրար էինք նայում՝ չըմբռնելով նրա տարօրինակ պահվածքի պատճառը:
- Հեռվում՝ կապտաթույր մշուշի մեջ երևում էր սարը՝ փեշերը պատած խիտ թփուտներով, իսկ կատարը՝ անտառով:

38

**Ավ. Իսահակյանի նշված ստեղծագործություններից քանի՞սն են բանաստեղծություն.**

«Մի մրահոն աղջիկ տեսա», «Ռավեննայում», «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Հավերժական սերը», «Ասպետի սերը», «Հայրենիքիս», «Հայրենի հողը», «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Է՛յ, ջան հայրենիք»:

39

**Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. գործնական, 2. դիտողություն, 3. հետաքրքրություն, 4. արդյունավետ, 5. պիտանի, 6. ընթացիկ, 7. հանդիսատես, 8. բարեկամական, 9. ուսանողական:

40

Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *-ի* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի)։

1. այգեգործ,
2. ծերունական,
3. տարկետում,
4. պատանեկան,
5. այրաբնակ,
6. քարայր,
7. խաղամուկ,
8. գերագույն,
9. ծառատունկ։

41

Նշել այն շարքերի համարները, որոնց բոլոր բառերը դերանուններ են։

1. նա, նաև, այլ, այլև
2. յուրաքանչյուր, մինչդեռ, նույն, որոշ
3. ոչ ոք, ամենայն, միմյանց, մի քանի
4. միևնույն, իրար, ոչինչ, մյուս
5. որևիցե, ուր, այնչափ, ինքը
6. նույնիսկ, նույնքան, նույնպես, նույնպիսի

42

Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ *չկա*։

*Նրա՝ ածուխի պես սև ու խիտ մորուքն սկսվում էր համարյա աչքերի տակից ու ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը, իսկ արծվային քիթն անգամ ծածկված էր մազերով։*

1. սկսվում էր – սահմանական եղանակ, կրավորական սեռ, **համարյա** – մակբայ
2. **ամբողջ** – անորոշ դերանուն, **երեսը** – գոյական, ուղղական հոլով
3. **ծածկված** – ա խոնարհման բայ, չեզոք սեռ, **արծվային** – ածական
4. **անգամ** – վերաբերական, **մազերով** – գոյական, գործիական հոլով
5. **նրա** – անձնական դերանուն, սեռական հոլով, **պես** – կապ, հետադրություն

43

Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների համարները։

*Լեռների ու անտառների հարուցած դժվարությունների պակասը լրացնում էին գետերը, որոնք անցնում էին քարեղեն խորին հատակի վրայով և երկու կողմերից պարիսպների նման ժայռերի միջով։*

1. **պակասը** – ուղիղ խնդիր, **լրացնում էին** – պարզ ստորոգյալ
2. **գետերը** – ենթակա, **քարեղեն** – որոշիչ
3. **որոնք** – ենթակա, **հատակի վրայով** – տեղի պարագա
4. **պարիսպների նման** – որոշիչ, **ժայռերի միջով** – տեղի պարագա
5. **հարուցած** – որոշիչ, **դժվարությունների** – հատկացուցիչ

Ըստ հերթականության նշել, թե որ բառահոդվածը ինչպիսի բառարանից է բերված: Բառարանների տեսակներից 2-ը ավելորդ են:

- 1. ՀՈՏ, գ. *Բույր*:
- 2. ՀՈՏ, գ. *Ոչխարների խումբ*:
- 3. +ՄԱՐԴ, ո հլ. «մարդ էակը»:  
=*Բնիկ հայ բառ՝ հնիս. mrtó՝ձևից, որ առաջանում է հնիս. mer-«մեռնիլ» արմատի ստորին mr-ձայնդարձից՝ -տ՝-մասնիկով*:
- 4. ԸՆԴ-ՀԱՏԱԿ ԱՆՑՆԵԼ (ՄՏՆԵԼ),-Թաքնված, ծածուկ, ոչ բացահայտ, գաղտնի գործել:
- 5. ԽՈՒԹ, ի, գ. 1. *Ճանապարհին դուրս գցված քար՝ պնդացած հողաթումբ են, խոչ*: 2. *Ջրի խորքում կամ նրա մակերեսից դուրս գցված ժայռ*: 3. *Ֆիսք. արգելք, արգելիչ հանգամանք, խոչընդոտ*:
- 1. ստուգաբանական
- 2. բառակազմական
- 3. հոմանիշների
- 4. համանունների
- 5. բացատրական
- 6. դարձվածաբանական

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *Ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Մենք խոսում էինք այդ քաղաքից*: Այս նախադասության ընդգծված բառը անջատման խնդիր է:
2. Ներգործող, հանգման, անջատման, վերաբերության անուղղակի խնդիրներից ոչ մեկը ներգոյական հոլովով չի դրվում:
3. Ներգործող անուղղակի խնդիր ստանում են կրավորական բայերը, իսկ հանգման անուղղակի խնդիր՝ միայն չեզոքները:
4. Հանգման խնդիրն արտահայտվում է բառի թեքված կամ ուղիղ ձևով:
5. «*Նա որոշել է դառնալ օդաչու*» նախադասության մեջ *օդաչու* բառը ուղիղ խնդիր է:
6. Ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել կապային կառույցով:

## Բ մակարդակ

46 Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա*:

- 1) երփներանգ, լվածք, անհեթեթ, վիթ
- 2) շքերթ, աստղափրփուր, վեհապանծ, հելլեն
- 3) հեղհեղատ, հեղհեղուկ, ապաշխարել, ընդհանուր
- 4) շիճուկ, Եթովպիա, ժայտքել, վարկաբեկել

47 Ո՞ր շարքում *ու* ձայնավորի հնչյունափոխություն *չունեցող* բառ կա:

- 1) ընչասեր, փափկություն, տրտմաշուք
- 2) նշաձև, մթամած, քնաբեր
- 3) անվանացանկ, բնափայտ, ծնրադրել
- 4) ընպանակ, լկեկ, հրձիգ

48 Ո՞ր շարքում են բառերը դասավորված այբբենական կարգով:

- 1) դաստիարակ, դաստակերտ, դարպաս, դափնի
- 2) ուղեբեռ, ուղեկից, ուղեկալ, ուղղաթիռ
- 3) միահամուռ, միատարր, միլիոն, միգամած
- 4) քաշքշել, քառսածին, քառսանման, քաջակորով

49 Ո՞ր տարբերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:

- 1) *քամու բերած* – հեշտությամբ ձեռք բերված, *ձեռքերը շփել* – հաջողությունից ուրախանալ
- 2) *կողի ընկնել* – համառել, *հին դարմանը քամուն տալ* – անցած անախորժ դեպքերը հիշեցնել
- 3) *օր չանցած* – առանց ժամանակ կորցնելու, *փակուղի մտնել* – անելանելի դրության մեջ ընկնել
- 4) *սրտից արյուն կաթել* – չափազանց դաժան լինել, *երես դարձնել* – անուշադրության մատնել

50 Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ բարդ:

- 1) վրեժխնդիր, մեղմահունչ, առմիշտ, ոտնաչափ
- 2) բնանկար, մարդախույս, ուխտատեղ, ակնահաճո
- 3) սնանկ, բաժնետոմս, բքախեղդ, հացառատ
- 4) անվանացանկ, գորահավաք, հովասուն, քննախույզ

51

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ ածանցավոր:**

- 1) տարկետում, արժանի, կարծիք, փառատենչ
- 2) տարաշխարհիկ, ներդիր, բաղադրիչ, անդրադարձ
- 3) ոգևորություն, կանխիկ, բանբեր, արդյունք
- 4) առաջ, ոչինչ, կայք, չվերթ

52

**Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավանկ:**

- 1) ավարառու, գնդասեղ, կուսակցական
- 2) կետորսանավ, ալեծուփ, մշտադալար
- 3) կրափոշի, թիավարել, տղամարդ
- 4) անասնապահ, մորաքույր, մտահայեցություն

53

**Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

- 1) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:
- 2) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակ:
- 3) Սրբազան, թող այսուհետև ոչ մի արհավիրք չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի դողանջը:
- 4) Միամիտդ դարձար բանասարկուների ձեռքին խաղալիք:

54

**Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

- 1) Խարխուլ սանդուղքով վայր իջավ, մի քանի րոպե անհմաստ քայլեց քակում ու մոտեցավ մառանի դռանը:
- 2) Բայց, ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որն անհրաժեշտ էր գյուղին:
- 3) Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է, և էլ երբեք չի իմանա, թե ինչ է բերում վաղվա օրը:
- 4) Պատահե՞լ է ձեզ ձմռան բքին լինել դրսում՝ խավարի մեջ, երբ սառչում է ձեր դեմքը, և թվում է, թե փրկության ուղի չկա, և հանկարծ ցոլում է վիթխարի մի կրակ:

55

**Ո՞ր նախադասության մեջ սուկածանցավոր բայ չկա:**

- 1) Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տրորի թաց հողը:
- 2) Երբ առաջին անգամ առվով ջուր էր կապել, ոտքերը մինչև ծնկները վեր քշտած, բահն ուսին՝ անցել առվով, գյուղում նրան արագիլի էին նմանեցրել:
- 3) Գյուղացիներից մեկը շինարարության համար քար հանելու ժամանակ գետնի տակից գտնում է զանազան ամանների կտորներ ու այլ իրեր:
- 4) Կոհակները օրորում էին նավը, կուտակվում իրար վրա, բախվում իրար, հեռու քշվում՝ կործանվելով ահարկու գոռոցով:

56

Ո՞ր նախադասության մեջ վերաբերական *չկա*:

- 1) Մի՞թե դժվար է ճիշտ ժամին ներկայանալ աշխատավայր:
- 2) Տարիներն ամենևին չէին խաթարել նրա գեղեցկությունը:
- 3) Միայն մի ցավ էր նրան տանջում՝ որդու ամուսնությունն այլադավանի հետ:
- 4) Նա երևի մոռացել է, որ ժամադրված է:

57

Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:

*Արաքսը ....., հոսում դանդաղ, խոհուն, իսկ հեռվում՝ երկնաքերծ բարդիների  
....., ..... բներ .....*:

( վշալ, կատար, արագիլ, նշմարել )

- 1) վշում էր, կատարը, արագիլներով, է նշմարվում
- 2) վշալիս, կատարներում, արագիլի, են նշմարված
- 3) վշում է, կատարների, արագիլների, են նշմարվում
- 4) վշալով, կատարները, արագիլի, նշմարեցին

58

Ընդգծվածներից ո՞րը դերբայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Բայց այգեպանը չդադարեց **այգին մշակել**:
- 2) Ծերունին թափ տվեց ոտքերի փոշին և **առանց շրջվելու** հեռացավ քաղաքից:
- 3) **Կամրջի վրայով անցնելիս** աջ ու ձախ չէր նայում:
- 4) Անհրաժեշտ էր **մի քանի օրով գյուղ գնալ**:

59

Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Նրանցից մեկը գալու էր մեզ հետ, մյուսները ուղին շարունակելու էին ձորով:
- 2) Զոհրակի գորքը սրընթաց անցան գետը, ու սկսվեց մարտը:
- 3) Ամեն ինչ՝ թագը, գայիստը, հարստությունը, կարող է աղավաղել մարդկությունը մարդու մեջ:
- 4) Այդ պարագային ոչ ոք ուշադրություն չէր դարձրել, մինչդեռ ձախողման պատճառները հենց այդտեղ պետք էր փնտրել:

60

**Ո՞ր տարբերակում է պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը սխալ փոխակերպված բարդի:**

- 1) *Յուրաքանչյուր ճամփորդ մի տեսակ սրբազան պարտականություն է համարել Շվեյցարիային հիացմունքի տուրք վճարելը:*  
Յուրաքանչյուր ճամփորդ մի տեսակ սրբազան պարտականություն է համարել այն, որ հիացմունքի տուրք վճարի Շվեյցարիային:
- 2) *Ամենահետաքրքիրը ոչ մեկի՝ մյուսի արածով գոհ չլինելն էր:*  
Ամենահետաքրքիրն էր, որ ոչ մեկը մյուսի արածով գոհ չէր:
- 3) *Բուսականությամբ հարուստ արևելքում ծնված բանաստեղծն իր անշուք բնակարանը շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով:*  
Բանաստեղծը, որ ծնվել էր բուսականությամբ հարուստ արևելքում, իր անշուք բնակարանը շրջապատել էր բնության գեղեցիկ և գույնզգույն ժապավենով:
- 4) *Թուրքական հեղափոխությունն ավարտվելուց հետո Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա:*  
Երբ թուրքական հեղափոխությունն ավարտվեց, Սիամանթոն ուղևորվեց Ամերիկա:

61

**Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Կատակողները մի քիչ կկատակեն հասկացողները կհասկանան:
- 2) Գրգռված ու գույնը գցած դուրս եկավ կենտրոնակայանից մի քանի օր լուր չկար հետախույզներից:
- 3) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:
- 4) Ում է հայտնի վիշտն է կնոջը շնորհում պերճախոս կեցվածքի այդ գաղտնիքը թե երջանկությունը դա դժվարըմբռնելի մի առեղծված է:

62

**Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բոլոր այն պնդումների համարները, որոնք համապատասխանում են Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը» պատմվածքի բովանդակությանը:**

1. Դաժան կռվի արդյունքում զոհվում են կռվի բոլոր մասնակիցները՝ գայլը, մայր ձիւն և քուռակը:
2. Շների վրա հասնելուց հետո անգամ գայլը չի հեռանում, կռվում է շների դեմ, որովհետև չէր ուզում դատարկաձեռն վերադառնալ ձագերի մոտ:
3. Ձիու և գայլի կռվի տեսարանը այնպես է ցնցում փոքրիկ հովվին, որ վերջինս սարսափելի գոռոցով օգնության է ուղարկում հովտի բոլոր շներին:
4. Մայր ձիուն հաջողվում է մի քանի փորձից հետո պարանը կտրել և անասելի թափով սլանալ դեպի քուռակը:
5. Փոքրիկ հովվին գայլի ու ձիու կռվի մասին տեղեկացնում են դիմացի բլուրներից:
6. Պատմվածքի ավարտին նախկին փոքրիկ հովվիվը ցավով կասկած է հայտնում, որ ձիւն չի հիշում ո՛չ իր կարմիր մայրիկին, ո՛չ տարիներ առաջ հովտում կատարվածը:

- 1) 2, 4, 5
- 2) 2, 3, 6
- 3) 1, 3, 4
- 4) 1, 5, 6



63

**Գրական ո՞ր ուղղության ներկայացուցիչներից է Մուրացանը:**

- 1) սիմվոլիզմի
- 2) ռեալիզմի
- 3) կլասիցիզմի
- 4) ռոմանտիզմի

64

**Քանի՞ քառագույգեր են իրար հականիշ.**

հանուն-ընդդեմ, զարտուղի-օրինական, ճապաղ-ծավալուն, ունևոր-մեծատուն, անգո-իրական, անըստգյուտ-կատարյալ, հարթ-ծանծաղ, գռեհիկ-բարեկիրթ:

65

**Տրվածներից քանի՞սն են ածականներ.**

մայիսյան, ընտրանի, լավագույն, գեղանի, քարաշեն, լուսե, արտաքուստ, մարմարե, կարկաչուն, ժանտ, ամբողջովին:

66

**Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

համեմատություն, մակդիր, հանգ, չափազանցություն:

*Հայրը ինչպես մռայլ մի ամպ,  
Աղջիկն անուշ մի լուսին,  
Ամպ ու լուսին իրար փարված՝  
Դուրս են գալիս միասին:*

67

**Նշել այն բառերի համարները, որոնցում *n*-ն արտասանվում է *վո*.**

1. բարձրորակ, 2. ոգելից, 3. ամենատրակյալ, 4. որևէ, 5. որդեսեր, 6. բազմաոստ, 7. նրբաոճ, 8. անողորմ, 9. չարորակ:

68

**Նշել այն նախադասությունների համարները, որոնց ստորադասի բնույթը սխալ է նշված:**

1. Թե ուզում ես քեզ հարգեն, հարգի՛ր նախ դիմացիների: (*պայմանի պարագա*)
2. Սարսափելի էր այս ամենն այնքան, Որ մեր շուրթերից ոչ մի բառ չընկավ: (*չափի պարագա*)
3. Ով չի վախենում ճշմարտությունից, ստից վախենալու բան չունի: (*ենթակա*)
4. Ես անհամբեր սպասում եմ, թե երբ նորից կհանդիպեմ քեզ: (*ուղիղ խնդիր*)
5. Ես չնկատեցի, թե նա ինչպես հեռացավ մեզանից: (*ձևի պարագա*)

Ըստ հաջորդականության՝ նշել, թե որ հատվածը Վ. Տերյանի որ ստեղծագործությունից է:

- Նայվածներով խորին, եկար, ներո՞ղ,  
Եկար կրկին գերող, խորհրդավո՞ր.  
Եկար հուշիկ, անչար ավաղներով,  
Օրորներով ամենօրոր:
  - Բաբելոնն է եղել մեր ախոյանը՝ տե՛ս,-  
Անհետ կորել, անցել է -չար մշուշի պես:
  - Նորից ես մանուկ եմ այսօր,  
Դրախտ է նորից իմ հոգում:
  - Նվագով անուշ քանի՛ սիրեն  
Կանչում էին ինձ և կախարդում,  
Բայց սիրտըս մաքուր, որպես ցորեն,  
Պահեց անունըդ վշտում արթուն:
1. «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի  
ցեղերին»
  2. «Ոսկեհանդերձ եկար...»
  3. «Որպես Լաերտի որդին...»
  4. «Կարծես թե դարձել եմ ես տուն»

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է*, *Միայն է*, *Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. **Տալ** բայի հարադրությամբ կազմված պատճառական բայերը խոնարհվելիս առաջին բաղադրիչը պահում են անփոփոխ. խոնարհվում է միայն **տալ** բայը:
2. Պատճառական ածանց ունեցող բայերի եզակի հրամայականը կազմվում է **ու** վերջավորությամբ:
3. Պատճառական բայերի և **ե** խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալ ժամանակաձևերը տարբեր կազմություններ ունեն:
4. Պատճառական բայերից կարող են կրավորական սեռի բայեր կազմվել:
5. Պատճառական, սոսկածանցավոր և կրավորական բոլոր բայերը պատկանում են **ե** խոնարհման:
6. Եթե բայի մեջ առկա է **ացն**, **եցն** կամ **ցն** տառակապակցությունը, ապա այդ բայը միշտ պատճառական է: